Պատասխանողը:

Արդյունքում Դատարանը գտնում է, որ պայմանագրի միակողմանի լուծման հիմքերի իրավաչափությունը Պատասխանողի կողմից հիմնավորված չէ, և հայցը ենթակա է բավարարման:

6. Դատական ծախսեր.

ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին, Դատարանն արձանագրում է, որ հայցի բավարարմամբ պայմանավորված դատա-կան ծախսերը պետք է կրի Պատասխանողը, ինչի արդյունքում վերջինիցս հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հայցը բավարարել. «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Թագ Հէմ» ՍՊ ընկերության միջև 15.12.2023 թվականին կնքված թիվ «ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-62/23-4» ծածկագրով պայմանագրի 24.06.2024թ.-ի թիվ 0802-2024 միակողմանի լուծումը ճանաչել անվավեր:

2. «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ից հօգուտ «Թագ Հէմ» ՍՊ ընկերության բռնագանձել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Դատական ծախսերի հարցը

համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարվելու դեպքում կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am